ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N ԱՐԿ/281-2019

„03„ 12 2019թ.

ք.Արտաշատ

## ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2019 թվականի տարեկան ծրագրով.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Նորաբացի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում 2019 թվականի դեկտեմբերի 04-ից մինչև դեկտեմբերի 09-ը ներառյալ՝ 4 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Նորաբացի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կողմից 2016, 2017, 2018 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ մասի՝ ընտրանքային կարգով իրականացնել դրամական միջոցների և նյութական արժեքների գույքագրում:

Recoverable Signature

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ